ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/92

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 31.07.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Գազկոմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գազկոմշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 31.07.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների իրականացումը:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ–ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2018թ. ժամը 18:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով կայացվել է որոշում Ընկերությանը 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընկերությանը ծանուցվել է հայտի ապահովման և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետներում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2018թ ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3-1 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1)Մասնակիցը Հավելված 5.1-ով ներկայացրել է Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/h 366 AL 61, 2010թ.), սակայն նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:

2)Հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված է «ՀՀՔՊԿ-ԲԸԱԾՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը:

3)Մասնակցի կողմից ներկայացվել է Հավելված 5.2-ում նշված աշխատակից Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում: Նույն Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրը առոչինչ համարել:

Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի գրության վերաբերյալ և ապահովել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:

4)Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱԾՁԲ-17/61 պայմանագրի մասով դուրս գրված երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

5)Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.11.2017թ. կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագրի 8.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1 օրինակելի ձևերը:

6)Բացակայում են Մասնակցի ներկայացրած 27.03.2017թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

7)Մասնակցի ներկայացրած 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի մասով 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի:

8)Բացակայում են Մասնակցի ներկայացրած 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի 6.3 կետում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

Գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում Ընկերությանը ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում նշված թերությունները շտկելու մասին:

Ընկերության կողմից թերությունները շտկվել և համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետներում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2018թ ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3-2 արձանագրության 1-ին կետի 1.1 և 1.3 ենթակետերով արձանագրվել է Ընկերության կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները, համաձայն որի՝

1. Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Մասնակիցը Հավելված 5.1-ով ներկայացրել է Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/h 366 AL 61, 2010թ.), սակայն նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակիցը կրկին ներկայացրել է 01.02.2018թ.կնքված Ծառայությունների մատուցման (վարձակալության) պայմանագիրը՝ 1.1 կետում ավելացնելով «գործարանային 50մ երկարությամբ խողովակով» արտահայտությունը, իսկ նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվում է, որ պայմանագրում ցանցակացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե

դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

2. Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված է ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Հավելված 5.2-ում ընթացակարգի ծածկագիրը չի ուղղվել:

3. Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Մասնակցի կողմից ներկայացվել է Հավելված 5.2-ում նշված աշխատակից Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում: Նույն Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն (կցվում է) այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրը առոչինչ համարել:

Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի գրության վերաբերյալ և ապահովել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Պատասխան գրությամբ Մասնակիցը չի պարզաբանել Վաչագան Գևորգյանի գրությունը՝ փոխարենը նշելով, որ վերջինս առողջական խնդիրների պատճառով չի կարող ամեն օր ներկա գտնվել շինհրապարակում: Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը բավարարելու համար ներկայացվել է մեկ այլ աշխատակցի տվյալներ, որն ըստ Հավելված 5.2-ի հանդիսանում է «Գազկոմշին» ՍՊԸ-ի աշխատակից, իսկ ըստ ստորագրած համաձայնագրի՝ «Սեյսմնախագիծ» ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր:

Միևնույն ժամանակ ներկայացված չէ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենը:

4. Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագրի մասով դուրս գրված երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացվել են երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և աշխատանքների հանձման-ընդունման արձանագրությունները: Ըստ պայմանագրի 1.3 կետի՝ աշխատանքների 50%-ի (շուրջ 23,100,000 ՀՀ դրամ) կատարման ժամկետ է սահմանվում պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացույցային օրը, սակայն ըստ ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունների՝ սահմանված ժամկետում ներկայացվել են միայն 4,862,650 ՀՀ դրամի աշխատանքներ (21.05%): Նշված 50% աշխատանքների մնացած մասը՝ 18,237,350 (23,100,000- 4,862,650) ՀՀ դրամի չափով կատարվել են սահմանված ժամկետի խախտումներով:

5. Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.11.2017թ. կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագրի 8.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1 օրինակելի ձևերը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացվել են հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը:

6. Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Բացակայում են Մասնակցի ներկայացրած 27.03.2017թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացվել է ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի հաստատած ակտը:

7. Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Մասնակցի ներկայացրած 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի մասով 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացվել է 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշվի երկկողմանի հաստատած օրինակը:

8. Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Բացակայում են Մասնակցի ներկայացրած 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի 6.3 կետում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացված Ծավալաթերթը-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի նախագծանախահաշվային փաստաթուղթը: Ներկայացված փոփոխված ծավալների վերաբերյալ ծավաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է պայմանագրի 02.011.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ, քանի որ վերջինիս վրա նշված է մեկ այլ պայմանագրի ծածկագիր:

Նույն անձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետով կայացվել է որոշում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը.

Ընկերության հայտը մերժվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ վերջինիս կողմից հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի պահանջները՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2018թ ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 3-2 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետում ներկայացված ուսումնասիրության արդյունքների աղյուսակի (այսուհետ՝ Աղյուսակ) առաջին կետին, որտեղ

որպես անհամապատասխանություն նշված է, որ Մասնակիցը կրկին ներկայացրել է 01.02.2018թ. կնքած Ծառայությունների մատուցման (վարձակալության) պայմանագիրը՝ 1.1 կետում ավելացնելով «գործարանային 50մ երկարությամբ խողովակով» արտահայտությունը, իսկ նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվում է, որ պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացումը վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, ուզում եմ տեղեկացնել, որ նշված պայմանագիրը ոչ թե փոփոխվել, այլ լուծարվել է կնքման օրը (համաձայնագիրը կցվում է) և նույն օրը՝ 01.02.2018թ., կնքվել է նոր պայմանագիր, որը ներկայացվել է հանձնաժողովին, իսկ լուծարված պայմանագիրը հանձնաժողովին ներկայացվել էր շփոթմամբ:

Աղյուսակի 2-րդ կետում ներկայացված անհամապատասխանության վերաբերյալ.

Կետում նշված է, որ հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը չի ուղղվել Ընկերության կողմից: Տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից կատարվել է շտկումը և «բաց ընթացակարգի» արտահայտությունը փոխարինվել է «բաց մրցույթ» արտահայտությամբ,իսկ ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրի Ը տառը դա զուտ տպագրական սխալ է և 5.2 հավելվածը ներկայացված է նույն մրցույթի շրջանակներում և ըստ էության վերաբերում է այդ մրցույթին:

Աղյուսակի 3-րդ կետում ներկայացված անհամապատասխանության վերաբերյալ.

Կետում նշված տեղեկությունը այն մասին, որ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենը ներկայացված չէ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ համաձայն Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերի պարզաբանման մասին հայտարարության, հարցադրմանը թե ինչ կրթություն է հարկավոր փորձագետ-կոստուկտորի համար, Պատվիրատուն պատասխանել է, բարձրագույն կրթությամբ ճարտարագետ-շինարար, ինչից ելնելով Ընկերությունը ներկայացրել է համապատասխան մասնագետի ճարտարագետ-շինարարի որակավորումը և 25 տարվա փորձը հավաստող փաստաթղթերի պատճենները, իսկ փորձագետ-կոստուկտորի մասով ներկայացվել է համապատասխան 8 տարվա փորձը հավաստող փաստաթղթեր:

ՈՒզում եմ տեղեկացնել նաև, որ գնահատող հանձնաժողովը բանավոր հարցում է կատարել Ընկերության կողմից, որպես հիմնական աշխատակազմում ներառված մասնագետ Վաչագան Գևորգյանին նրա մասնակցության վերաբերյալ, որի իրավունքը մեր կարծիքով հանձնաժողովը չուներ, քանի որ Կարգի 67-րդ կետի համաձայն Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով

պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Աշխատակազմի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացվել են նոր տվյալներ և փաստաթղթեր՝ Վաչագան Գևորգյանին փոխարինելով Զավեն Խլղաթյանով:

Ընկերության կողմից հրավերի 5.2 հավելվածում սահմանված տեղեկանքի աղյուսակի գործատուի անվանումը դաշտը լրացնելիս հիմք է ընդունել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում ներկայացված մասնակիցների գործատու հանդիսանալու փաստը:

Աղյուսակի 4-րդ կետում ներկայացված անհամապատասխանության վերաբերյալ.

Կետում նշված տեղեկատվությունը այն մասին, որ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագիրը կատարված է ոչ պատշաճ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ նշված ուշացումները չեն հանդիսացել ընկերության անգործության արդյունք, այլ կապված են եղել 2017թ. ապրիլի 10-ից ՀՀ ազգային ժողովի պատգամավորի ընտրությունների ընթացքում շին օբյեկտը ընտրական տեղամասի վերածելու հետ, ինչի մասին Ընկերության կողմից նաև Երևանի քաղաքապետարան է ներկայացվել համապատասխան գրություն (գրությունը կցվում է):

Ուզում եմ տեղեկացնել նաև, որ Երևանի քաղաքապետարի կողմից առկա է տեղեկանք առ այն, որ 17.03.2017թ. կնքված թիվ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ն աշխատանքներն իրականացրել է ամբողջ ծավալով, պատշաճ որակով և ժամանակին:

Աղյուսակի 8-րդ կետում ներկայացված անհամապատասխանության վերաբերյալ.

Կետում նշված տեղեկատվությունը այն մասին, որ 29.09.2016թ. կնքած ենթակապալի պայմանագրին կցված ծավալաթերթ-նախահաշվի վրա գրված է այլ ծածկագիր, համապատասխանում է իրականությանը, բայց դա զուտ անփութության հետևանք է եղել, իսկ ծավալաթերթ-նախահաշիվը իրականում նշված ենթակապալի պայմանագրի ծավալաթերթ-նախահաշիվն է, ինչի մասին վկայում են նաև այդ պայմանագրի շրջանակներում առկա կատարողական ակտերը և հաշիվ ապրանքագրերը:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին խնդրել է.

1.Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 3-2 Արձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:

2.Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 3-2 Արձանագրության 1-ին կետի կետով «ՍՆԱՐ» ՍՊԸ և «ԹԻՎ 1 ՇԻՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ Կոնսորցիումը Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:

3.Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Մակսիմ Միսակյանը և լիազորված ներկայացուցիչ Հայկ Ղազարյանը:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 31.07.2018թ. ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 03.08.2018թ. թիվ 02/16.4/3828-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմը, ուսումնասիրելով «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնման գործընթացի վերաբերյալ «Գազկոմշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված բողոքը, հայտնում է.

1) 2017 թվականի մարտի 17-ին կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագրի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքը, առ այն, որ նշված պայմանագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվել են ամբողջ ծավալով,

պատշաճ որակով և ժամանակին, ընկերության կողմից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել:

2)Պատվիրատուի կողմից 2018թ. հունիսի 1-ին հրապարակված հրավերի պարզաբանման մասին հայտարարության մեջ հարցադրումն ու պատասխանը վերաբերում են փորձագետ-կոնստրուկտորի կրթությանը (որը պետք է լինի բարձրագույն՝ ճարտարագետ-շինարարի), իսկ փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ պահանջը սահմանված է հրավերով: Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից փորձագետ-կոնստրուկտորի հետ կապված 8 տարվա փորձը հավաստող փաստաթղթեր գնահատող հանձնաժողովին չեն ներկայացվել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արթուր Սարգսյանցը և Արայիկ Մանացականյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 31.07.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 03.08.2018թ. թիվ 02/16.4/3828-18 գրությունը, «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.07.2018թ. կայացած նիստի թիվ 2, 19.07.2018թ. կայացած նիստի թիվ 3-1 և 23.07.2018թ. թիվ 3-2 արձանագրությունները, «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Գազկոմշին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

«ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի 2.5 կետի համաձայն.

Մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում նույն հրավերով պահանջվող լիցենզիայի (ներդիրների) շրջանակներում նախկինում կատարված պայմանագրերը, (շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները):

բ. նույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2) «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

1.Տեխնիկական միջոցի անվանումը՝ Ինքնաթափ ա/մ, տիպը՝ ցանկացած, պահանջվող քանակը՝ 2 հատ:

2.Տեխնիկական միջոցի անվանումը՝ Բետոնամղիչ (գործարանային 50 մ երկարությամբ խողովակ), մրցույթին մասնակցելու օրը մեքենան պետք է գտնվի ՀՀ տարածքում, տիպը՝ ASTRA 8450 (կամ համարժեք), պահանջվող քանակը՝ 1 հատ:

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝ տեխնիկական միջոցի անվանումը, տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը, տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

4) «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

1.Մասնագետների նվազագույն քանակը՝ 2, որակավորումը՝ ճարտարագետ-շինարար (բարձրագույն կրթությամբ), աշխատանքային փորձը (ժամանակահատվածը)՝ առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ շինարարության ոլորտում համանման աշխատանքների կատարում;

2. Մասնագետների նվազագույն քանակը՝ 1, որակավորումը՝ ճարտարագետ-շինարար, որը պետք է ունենա նաև քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում (բարձրագույն կրթությամբ), աշխատանքային փորձը (ժամանակահատվածը)՝ ճարտարագետ-շինարարի առնվազն 25 տարվա աշխատանքային փորձ իսկ փորձագետ-կոնստրուկտորի առնվազն 8 տարվա աշխատանքային փորձ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ շինարարության ոլորտում համանման աշխատանքների կատարում: Ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-

կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է:

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս նույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝ Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը՝ ըստ ժամանակահատվածի և գործունեության ոլորտի և կատարած աշխատանքի, գործատուի անվանումը:

ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ներկայացրել է Հրավերի վերաբերյալ 31.05.2018թ. ստացված հարցադրումների վերաբերյալ պարզաբանումները՝ համաձայն որոնց, հաշվի առնելով շինարարական օբյեկտի ռիսկայնությունը և կոնստրուկտիվ աշխատանքների լուծումների բարդությունը՝ հանձնաժողովը գտնում է, որ 25 տարվա աշխատանքային փորձը պարտադիր է: Այն հարցադրմանը, թե ինչ կրթություն է հարկավոր փորձագետ-կոնստրուկտորի համար, Հանձնաժողովը պարզաբանել է, որ անհրաժեշտ է բարձրագույն կրթությամբ ճարտարագետ-շինարար:

«ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 03.07.2018թ. կայացած նիստի N 2 արձանագրության՝

• 1.1 կետով արձանագրել է, որ «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ի ընդհանուր գնային առաջարկը կազմել է 584,400,000 ՀՀ դրամ:

• 2.1 կետով Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ին:

• 3.1 կետի «բ» ենթակետով որոշել է Ընկերությանը ծանուցել հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Ի կատարումն Հանձնաժողովի 03.07.2018թ. կայացած նիստի N 2 արձանագրության 3.1 կետով կայացրած որոշման՝ «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է.

1.Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի 5.1 հավելվածով՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների մասին տեղեկանքով՝ Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/հ 366 AL 61, 2010թ.), վարձակալած:

«ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ի և «Պատ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.02.2018թ. կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրի 1.1 կետով սահմանվել են բետոնամղիչի համապատասխան պարամետրերը (մակնիշը, արտադրության տարեթիվը, հաշվառման համարանիշը, նույնականացման համարը): Նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվել է, որ պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

2. Հավելված 5.2՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք, որի վերին աջ անկյունում նշված է «ՀՀՔՊԿ-ԲԸԱԾՁԲ-18/2» ծածկագրով բաց ընթացակարգ արտահայտությունը:

3. Հավելված 5.2-ով՝ աշխատակից Վաչագան Գևորգյանի տվյալները՝ (ինժեներ շինարար, աշխատանքային փորձը (ժամանակահատվածը) 30տ., փորձագետ-կոնստրուկտոր աշխատանքային փորձը (ժամանակահատվածը) 8 տ.,), գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ շինարարության ոլորտում համանման աշխատանքների կատարում, գործատուի անվանումը՝ «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ: Ներկայացվել է նաև Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀ ՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում:

Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրը առոչինչ համարել:

4.Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրեր, «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ն Հանձնաժողովին է ներկայացրել.

• Երևանի քաղաքապետարանի հետ 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագիրը (ընդհանուր գինը՝ 46,099,116 ՀՀ դրամ): Նշված պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ աշխատանքների 50%-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացույցային օրը (...):

• «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հետ 17.11.2017թ. կնքված կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագիրը: Նույն պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ պայմանագրի N1, N2, N3, N4, N4.1 և N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

• ՀՀ Տավուշի մարզպետարանի հետ 27.03.2017թ. կնքված NՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագիրը:

• «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի հետ 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագիրը: Կից ներկայացվել են նաև հարկային հաշիվներ:

• «Մեվրիկար» ՍՊԸ-ի հետ 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագիրը:

Նույն պայմանագրի 6.3 կետի համաձայն՝ պայմանագրին կցվում են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, համաձայնեցված համապատասխան կազմակերպությունների կողմից:

«Մեվրիկար» ՍՊԸ-ի հետ 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի N1 փոփոխության 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինն ավելացվել է 14,326,733 ՀՀ դրամով (ներառյալ ԱԱՀ):

Հանձնաժողովի 19.07.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3-1 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է Ընկերության կողմից ներկայացված որակավորման

պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները, համաձայն որի՝

1) Մասնակիցը Հավելված 5.1-ով ներկայացրել է Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/h 366 AL 61, 2010թ.), սակայն նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:

2)Հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված է «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը:

3)Մասնակցի կողմից ներկայացվել է Հավելված 5.2-ում նշված աշխատակից Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում: Նույն Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրը առոչինչ համարել:

Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի գրության վերաբերյալ և ապահովել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:

4)Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագրի մասով դուրս գրված երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

5)Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.11.2017թ. կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագրի 8.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1 օրինակելի ձևերը:

6)Բացակայում են Մասնակցի ներկայացրած 27.03.2017թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման

արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

7)Մասնակցի ներկայացրած 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի մասով 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի:

8)Բացակայում են Մասնակցի ներկայացրած 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի 6.3 կետում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է Ընկերությանը ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2018թ ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3-2 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել են Ընկերության կողմից ներկայացված՝ շտկված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները, համաձայն որի՝

1.Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Մասնակիցը Հավելված 5.1-ով ներկայացրել է Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/h 366 AL 61, 2010թ.), սակայն նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակիցը կրկին ներկայացրել է 01.02.2018թ.կնքված Ծառայությունների մատուցման (վարձակալության) պայմանագիրը՝ 1.1 կետում ավելացնելով «գործարանային 50մ երկարությամբ խողովակով» արտահայտությունը, իսկ նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվում է, որ պայմանագրում ցանցակացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

2.Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված է ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Հավելված 5.2-ում ընթացակարգի ծածկագիրը չի ուղղվել:

3.Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Մասնակցի կողմից ներկայացվել է Հավելված 5.2-ում նշված աշխատակից Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում: Նույն Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն (կցվում է) այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրը առոչինչ համարել:

Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի գրության վերաբերյալ և ապահովել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Պատասխան գրությամբ Մասնակիցը չի պարզաբանել Վաչագան Գևորգյանի գրությունը՝ փոխարենը նշելով, որ վերջինս առողջական խնդիրների պատճառով չի կարող ամեն օր ներկա գտնվել շինհրապարակում: Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը բավարարելու համար ներկայացվել է մեկ այլ աշխատակցի տվյալներ, որն ըստ Հավելված 5.2-ի հանդիսանում է «Գազկոմշին» ՍՊԸ-ի աշխատակից, իսկ ըստ ստորագրած համաձայնագրի՝ «Սեյսմնախագիծ» ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր: Միևնույն ժամանակ ներկայացված չէ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենը:

4.Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագրի մասով դուրս գրված երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացվել են երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և աշխատանքների հանձման-ընդունման արձանագրությունները: Ըստ պայմանագրի 1.3 կետի՝ աշխատանքների 50%-ի (շուրջ 23,100,000 ՀՀ դրամ) կատարման ժամկետ է սահմանվում պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացույցային օրը, սակայն ըստ ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունների՝ սահմանված ժամկետում ներկայացվել են միայն 4,862,650 ՀՀ դրամի աշխատանքներ (21.05%): Նշված 50% աշխատանքների մնացած մասը՝ 18,237,350 (23,100,000- 4,862,650) ՀՀ դրամի չափով կատարվել են սահմանված ժամկետի խախտումներով:

5.Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.11.2017թ. կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագրի 8.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացվել են հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը:

6.Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Բացակայում են Մասնակցի ներկայացրած 27.03.2017թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացվել է ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի հաստատած ակտը:

7.Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Մասնակցի ներկայացրած 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի մասով 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացվել է 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշվի երկկողմանի հաստատած օրինակը:

8.Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն.

Բացակայում են Մասնակցի ներկայացրած 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի 6.3 կետում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև

պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

Արձանագրված անհամապատասխանության ուղղում.

Մասնակցի կողմից ներկայացված Ծավալաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի նախագծանախահաշվային փաստաթուղթը: Ներկայացված փոփոխված ծավալների վերաբերյալ ծավաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է պայմանագրի 02.01.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ, քանի որ վերջինիս վրա նշված է մեկ այլ պայմանագրի ծածկագիր:

Նույն անձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքները, արձանագրել է, որ.

- մասնակիցը չի համապատասխանում «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին,

- մասնակիցը չի համապատասխանում «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին,

- 17.03.2017թ. կնքված ՈԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագիրը (ներառյալ համաձայանագիրը), 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագիրը չեն կարող գնահատվել որպես նախկինում պատշաճ կատարված պայմանագրեր: Մնացած պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չի բավարարում Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հիսուն տոկոսի պահանջը, քանի որ մասնակցի գնային առաջարկը 584,400,000 ՀՀ դրամ է, իսկ Հրավերի պահանջներին բավարարող N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3, N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 և N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է 212,063,381.3 ՀՀ դրամ:

Ներկայացված պայմանագրերի շրջանակներում մասնակիցը չի համապատասխանում «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին:

Նույն անձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետով կայացվել է որոշում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 31.07.2018թ. ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 03.08.2018թ. թիվ

02/16.4/3828-18 գրությամբ հատնած դիրքորոշումն առ այն, որ 17.03.2018թ. կնքված N ԵՔ-ԲԸԱԾՁԲ-17/61 պայմանագրի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքն այն մասին, որ նշված պայմանագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվել են ամբողջ ծավալով, պատշաճ որակով և ժամանակին, Ընկերության կողմից Հանձնաժողովին չի ներկայացվել:

Ընկերությունն առարկեց, որ քանի որ Ընկերության կողմից ներկայացվել են պայմանագրի կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունները, ինչպես նաև երկկողմանի ստորագրված հարկային հաշիվների պատճենները, ուստի Ընկերությունը անհրաժեշտ չի համարել ներկայացնել նաև տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ինչ վերաբերում է «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությանը, ապա Ընկերությունը նշեց, որ իր կողմից երկրորդ անգամ ներկայացվել է այլ մասնագետի՝ Զավեն Խլղաթյանի փաստաթղթերը, որը փոխարինելու էր Վաչագան Գևորգյանին, և ուսումնասիրելով Հրավերի պարզաբանումը՝ Ընկերությունը եկել է այն եզրահանգման, որ որպես որոկավորում պետք է ներկայացնի ճարտարագետ-շինարարի որակավորում:

Պատվիրատուն ընդգծեց, որ հիշյալ պարզաբանումը վերաբերում է փորձագետ-կոնստրուկտորի կրթությանը (որը պետք է լինի բարձրագույն՝ ճարտարագետ-շինարարի), իսկ փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ պահանջը սահմանվել է հրավերով: Միաժամանակ, Պատվիրատուն տեղեկացրեց, որ փորձագետ-կոնստրուկտորի հետ կապված 8 տարվա փորձը հավաստող փաստաթղթերը Ընկերության կողմից Հանձնաժողովին չեն ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի համապատասխանաբար 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ:

- 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:
- 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 61-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- 62-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

- 64-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնի պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները հետևյալ ձևով՝ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը, գործատուի անվանումը ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

Բողոքներ քննող անձն՝ ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, արձանագրում է, որ.

- Որպես «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ Ընկերության կողմից ներկայացված՝ «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ի և «Պատ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.02.2018թ. կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրի 1.1 կետով սահմանված բետոնամղիչի պարամետրերը (մակնիշը, արտադրության տարեթիվը, հաշվառման համարանիշը, նույնականացման համարը) լրացվել են «50 մ երկարությամբ խողովակով» արտահայտությամբ:

- «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի հիմնավորման նպատակով ներկայացված փաստաթուղթերում առկա է անհամապատասխանություն՝ Ընկերությունը ներկայացրել է Վաչագան Գևորգյանին փոխարինող՝ Զավեն Խլղաթյանի տվյալները, որի գործատուն ըստ Հավելված 5.2-ի հանդիսանում է «Գազկոմշին» ՍՊԸ-ն, իսկ ըստ 20.07.2018թ. ստորագրած համաձայնագրի՝ վերջինս հանդիսանում է «Սեյսմնախագիծ» ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր: Ընկերությունը չի ներկայացրել նաև հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի

պատճենը: Միևնույն ժամանակ «Գազկոմշին» ՍՊԸ-ն ներկայացրել է Զավեն Խլխաթյանի կենսագրական տվյալները (CV):

- Որպես նախկինում պատշաճ կատարված պայմանագիր, Ընկերությունը ներկայացրել է Երևանի քաղաքապետարանի հետ 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագիրը: Մասնակցի կողմից ներկայացվել են նաև երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և աշխատանքների հանձման-ընդունման արձանագրությունները: Ըստ ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունների՝ վերը նշված պայմանագրով աշխատանքները կատարվել են նույն պայմանագրով սահմանված ժամկետի խախտումներով: Ընդ որում, Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված տեղեկանքն այն մասին, որ նշված պայմանագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվել են ամբողջ ծավալով, պատշաճ որակով և ժամանակին, Ընկերության կողմից Հանձնաժողովին չի ներկայացվել:

- «Մեվրիկար» ՍՊԸ-ի հետ 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվի, ինչպես նաև ներկայացված փոփոխված ծավալների վերաբերյալ ծավաթերթ-նախահաշվի վրա նշված է այլ պայմանագրի ծածկագիր:

Հիմք ընդունել վերը նշված փաստական և իրավական հանգամանքները՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- Ընկերությունը՝ Կարգի 62-րդ կետով, ինչպես նաև Հրավերի 2.5 կետի 2-րդ ենթակետով նախատեսված «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնելով «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ի և «Պատ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.02.2018թ. կնքված Ծառայությունների մատուցման պայմանագիրը, բավարարում է Կարգով և Հրավերով սահմանված պահանջներին և Հանձնաժողովը տվյալ չափանիշի մասով Ընկերության հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ:

- «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 5.2-ով Ընկերության աշխատակազմում ներառված Զավեն Խլղաթյանի տվյալներում՝ որպես վերջինիս գործատու նշվել է «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ն, մինչդեռ տվյալ անձը հանդիսանում է «Սեյսմնախագիծ» ՍՊԸ-ի աշխատակիցը, հետևաբար Ընկերությունը չի բավարարում Կարգի 64-րդ կետով, ինչպես նաև Հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով սահմանված պահանջներին և Հանձնաժողովը տվյալ չափանիշի մասով Ընկերության հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ :

- Ընկերությունը չի համապատասխանում Կարգի 61-րդ կետով, ինչպես նաև Հրավերի 2.5 կետի 1-րդ ենթակետով նախատեսված՝ «մասնագիտական փորձառություն» չափանիշի

մասով սահմանված պահանջներին, քանի որ Երևանի քաղաքապետարանի հետ 17.03.2017թ. կնքված ՆԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագիրը, ինչպես նաև «Մեվրիկար» ՍՊԸ-ի հետ 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագիրը պատշաճ կատարելու վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը եղել են ոչ լիարժեք, որի արդյունքում Հանձնաժողովը զրկված է եղել դրանք լիարժեք գնահատելու հնարավորությունից, իսկ մնացած պայմանագրերի («ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հետ 17.11.2017թ. կնքված կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3, ՀՀ Տավուշի մարզպետարանի հետ 27.03.2017թ. կնքված ՆՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի հետ 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ չի բավարարում Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետով և Հրավերի 2.5 կետի 1-րդ ենթակետով սահմանված մասնակցի առաջարկած գնի առնվազն հիսուն տոկոսի պահանջը, հետևաբար Հանձնաժողովը տվյալ չափանիշի մասով Ընկերության հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 31.07.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ